

գութիւնը կը բաւէ նոյնչափ միջոցի մէջ Տարաւոր շարժում մը ու ձայնը նշանակելու։ Այս լուսանկարչական պատկերներն կրածին (calcium) լուսով կարելի է ուղիտակ կտաւի անցընել։ Ըարժագիրն ուրիշ բան չէ, բայց եթէ լուսանկարչական խաւարին անհետակ մը, որուն մէջ ժամացուցական գործիքով մը լուսանկարչական գոգող ծաղի մը (gelatine) մէջ դրանէ միւս գլանն անընդհատ կը դաւարի, գործիքն առնէ օդոյ ալիքն կը գգածի, որ միջոցին դրանները կը կենան անգգայի եղանակաւ՝ եւ այնպէս համահաստ պատկերը կը նկարուի։ Եթէ է գործիքը մեծ է, կարելի է նաեւ բնական մեծութեամբ տունուլ։ Այս առնուած պատկերներն կ'անցնին յետոյ սպիտակ կտաւի վրայ այնպէս արագութեամբ, որ ետեւէ ետեւ նկարուած պատկերներն իրարու հետ միանալով ամբողջ շարժումը կը ներկայացնեն եւ ձայնը կը լսեցնեն։ Այս գործիքով՝ նաեւ ներկայացուցի վերջնականէն ետքը՝ իւրաքանչիւր ոք՝ որ նոյն գործիքն ունի, կարող պիտի ըլլայ տան մէջ ամբողջ ներկայացումը կրկնել։



ՔԱՂԱՔԱՔԱՔԱՔԱ ՏԵՍՈՒԹԱՅ

Վիեննա, 29 Յունիս 1891:

Ամուսնի մէջ նշանակութիւն ունեցող գլխաւոր դէպքերէն մէկն է Անգղիոյ եւ Փորթուկալի մէջ շրջադարձ դաշնակցութիւնը, որով Ափրիկէի մէջ եղած սահմանաց խնդիրը վերջնականապէս կ'որոշուի եւ շատ մ'անհամոյ գծութեանց վերջի կը տրուի։ Փորթուկալցիք շատ մը գաղթականութիւններ ունին, որոնք մայր երկրին մեծ օգուտ չեն բերեր. այժմ՝ խնդիր եղած է՝ անոնցմէ ոմանք ծախել ուրիշ տէրութեանց։

Ռումինիա անցնալ ամսոյն վերջերը՝ մեծ տոն ունէր, վասն զի այդի Կարոլ Թագաւորին զանակալութեան քսանհինգամայ տարեդարձը կը տօնէր։ Կարոլ ընտրուեցաւ Նաբոլէոն Գ. ի առաջարկութեամբն, եւ նոյն ժամանակ գերմանական - աւստրիական խուժուկեանց առթիւ՝ հազիւ ծպտեալ կրցաւ համախիւր նիկիրը, զոր շատ խնդգտուաւ. բայց այս քսանհինգ տարիննորո մէջ կերպարանափոխ եղաւ։

Աւստրիոյ կայսրը այս օրերս Փիւմէ նաւահանգիստն երթալով՝ ողջունուեցաւ նոյն միջոցին հոն գտնուող անգղիական նաւատորմիչն. այս դէպքն առիթ տուաւ լրագրաց երկարօրէն գրելու՝ որ այս երկու մեծ պետութեանց շահերը նման ըլլալով՝ իրարու հետ սերտ քարեկամութեան մէջ են։ Միւս կողմանէ Գերմանիոյ կայսրն ու կայսրուհին քիչ ժամանակէ Անգղիա պիտի երթան այցելութեան։ Այս ամէկն իբրեւ ստոյգ նշան առնուեցաւ՝ որ Անգղիա իւր շահոց պահանջներովն ըստ կարի կ'աշխատի Երկրի դաշնակցութեան այժմու ունեցած դիրքը պահել։ Անիկ որոշ ըսուեցաւ այս՝ Իտալիոյ համար, որուն հետ մինչեւ անգամ գաղտնի դաշնակցութեան մէջ ըլլալու լուր տարածուած էր։ Անգղիոյ պաշտօննայք ուրանալով հանդերձ այսպէսի դաշնակցութեան մի գոյութիւնը, յայտնի ըսին՝ որ անգղիական նաւատորմիւր պիտի պաշտպանէ Իտալական ծովերը, եթէ օտար տէրութիւն մի (Գաղղիա) յարձակի անոնց վրայ։ — Երկի Դաշնակցութիւնը կերպապէս նորոգուեցաւ այս օրերս վեց տարւոյ համար։

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

ՌԵՍԻԲԵՆՍԵ

ՄԱՏՆԱՅԻՐԱՅԻՆ — Ստոյն - Կալիսթենայ (Pseudo-Callisthenes) վարոց Աղեքսանդրի ուսումնասիրութիւնը. 193:

ՊԱՏԻՐԱՅԻՆ — Պատմութիւն Պոլեմոնայի եւ Սուլտաւիոյ հայ Գաղթականութեան. 199:

ՀԱՄԻՍՏԱՅԻՆ — Էշմաննի Աւետարանը. 204: (Պատկերաւ։)

ԱՋԳԱՅԻՐԱՅԻՆ — Մեր առակաց՝ Նոգականաց հետ յարաբերութիւն. 210:

ԳՐԱՅԻՆ — Սզգային հրատարակութիւնը 1890 տարւոյ. 214: — Անվանեալն թղթակցութիւն Պաւլոսի եւ Կորնթացոց. 217: — Կ. Պ. Ա. Աղաման. 219: (Պատկերաւ։)

ՌԵՍԵՆՍԵ

ՄԱՏՆՍՊ 8ԱՄՈՒՎԵՐԸ, Պատմական վէպ. 220:

ՌԵՆԵՐԱՅԻՆ

ՆՈՐԱՌԻՐ — Զաղոցեղի դարմանը. 223: — Խուլ եւ համբնեւ գործը մը. 223:

ՏՆՏԵՍԱՅԻՆ — Զգալիժէ առարկաները պահել. 223:

ՄԱՆՐԱՌԻՐ — Էսթիմոս ամենամոտ գիւտը. 223:

ՔԱՂԱՔԱՔԱՔԱ ՏԵՍՈՒԹԱՅԻՆ 224:

ՀՐԱՏԱՐԱՅԻՐ ԵՒ ՊԱՏԱՄԱՆԱՏՈՒ ՆՈՐԱՅԻՐ

Գ. ՌԱՓԱՅԷԼ Կ. ՊԱՐԱՆՉ

ՎԻԵՆՆԱ. ՄԻԹԻՐԱՐԵՆՆ ԵՊԱՐԱՆ